13. Ասատ-բեկն խոտատեղի ունի մեր սարհատիցն (սահմանիցն) բավական միջոցավ հեռու՝ Շուշվո քաղաքին մոտ, նրա խոտն հարել տալուց հետո ուրիշի ձեռքով՝ մեզանից 50 ուլախ մեր մարդովն տանում է ու կրել տալիս Շուշի քաղաքն, հացն ու ամեն բանն մեզանից։

14. Ամեն տարի Ասատ-բեկի թալուղ (դրամովոր) հարկն հավաքելիս ժամանակն 30 մանեթ Ասատ-բեկի դարդան կառնե յուր համար և 16 մանեթ Միրզա-Հյուսեյինն՝ ոչ թե սովորական հարկի պես, այլ զոռով։

15. Այս երկու անձանց առաջինն ի տարին միշտ և երկրորդն երբեմն երբեմն կմնար մեր գյուղումն, նրանց հացն, ճուտն, արաղն, որ կխմե միշտ երկրորդն ի նոցուց, բրինձն և ձիանուն գարին և դարմանն մեզանից կառնեն նմանապես և քնելի շորն նոցա կտանք։

16. Ամեն տարի մեզանից տասն հատ ոչխար կառնե Ասատ-բեկն զոռով։

17. Անցյալ 1849 թվականումն Ասատ-բեկի մահասիլ Կյուլափլու Մուստաֆան մեկ քանի ամիս մնաց մեր շինումն և մեզանից 56 մանեթ փող առավ իզուր և զոռով, բացի յուրյան հացիցն ու թացիցն։

18. Մեկ տարի կա որ Ասատ-բեկն 2 շուն է պահել տալիս մեր շենումն, նրանց օրն 6 ֆունտ հաց է տալիս մեզանից և մածուն ու կաթն։

19. Որովհետև անցյալ 1849 թվումն մեր եղներն իբրև 100 հատ և 50 մարդ Ուեզդնի նաչալնիկին ուղարկեց մինգրելսկիյ եգերսկիյ պոլկի շտաբն բանացնելու համար և 20 օր ուշացան այնտեղ, վասն որո բարեպատեհ ժամանակն անցնելով, չը կարողացանք մեք, որ ինչպես հարկն է, ցիլ անել կամ գութան քշել, նույնպես և չկարողացանք Ասատ-բեկի համար, որ ամեն տարի մեկ անիրավությամբ ցլել կը տայր 30 գութանով, ցլել կամ գութանել յուր հարմար ժամանակին, այլ միայն ամառն ժամանակին ցլեցինք, բայց Ասատ-բեկն չհավանեց այն ցլին և վարել կամ ցանել տվավ, ուստի այս պատճառովս մեզանից 50 չեթվերթ ցորյան է պահանջում այս տարի նրան ավազն (փոխարեն)։

Այնուհետև գյուղացիք մեկ-մեկ թվում են, թե ինչքան ավելորդ ցորեն և գարի, դրամ իր օգտին և պետության գանձարանին հանձնելու համար գինի է Ասատ-բեկը իրենցից վերցնում։

Ըստ էության խանական ժամանակից այս մնացորդ կարգերը պահպանվում էին մինչև 1860-ական թվականների սկզբները։ 1861 թ. դեկտեմբերի 13-ի օրենքով կացությունը հիմնովին փոխվեց[13]։ Նոր կարգադրությունը թողնելով անխախտ գյուղացիների նախկին պարտավորությունները՝ այդ պարտավորությունների կատարման հսկողությունը, մալուչաճաթի հավաքումն և հողատերերին հանձնումը, գյուղի սահմանում ապահովության պահպանումը, հանցանքների քննությունը, դատական իրավունքները խլեց հողատերերից և տվավ գյուղական համայնքի կողմից ընտրված տանուտէրնէրին և դատարանին, մի մասն էլ գավառամասի զասեդատելներին։ Այսպիսով վերջնականապես մելիքները և բեկերը ճանաչվեցին սոսկ միայն հողատերեր։

Այնուամենայնիվ ֆեոդալական տուրքերը պահպանվեցին տեղ-տեղ բավական երկար ժամանակ։ Այսպես, Օրբելյանները մինչև XX դ. սկզբները պահանջաբար տոն օրերին ստանում էին նվերներ իրենց Տաթև և Սվարանց գյուղերի բնակիչներից և դժգոհ էին իրենց երրորդ գյուղի՝ Լորի բնակիչներից՝ ռնաքնէրից, որոնք օգտվելով իրենց գյուղի հեռավորությունից՝ խույս էին տա-

[13] «Второе полное Собрание законов», т. XXXVI, № 37743.